

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 30/3

ք.Երևան

1 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 20.04.2018թ. N4100766 ակտի դեմ «ՌԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ՌԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 20.04.2018թ. N4100766 ակտի դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացնող հարկ վճարողը նույն պահանջով դիմել է դատարան:

Քննարկվող դեպքում «ՌԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 20.04.2018թ. N4100766 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 15.05.2018թ. որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ (վարչական գործ թիվ ՎԴ/5434/05/17):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՌԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ

